

ԵՊՀ հեռակա ուսուցման ընդունելության քննություն - 2020

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Ա մակարդակ

1. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *հ*:

- 1) քամա-րել, ընդ-ամենը, ընդ-ուպ
- 2) նախագա-, հեկ-եկալ, շնոր-ք
- 3) աշխար-իկ, խոր-ուրդ, հեղ-եղուկ
- 4) արհամար-ել, հայթ-այթել, խոնար-

2. Ո՞ր շարքի *աչ* բոլոր բառերում է գրվում *ղ*:

- 1) ստա-ձագործ, փե-կ, փ-ձկոց
- 2) կե-տ, ա-ճատել, փո-կասպ
- 3) սպանա-, ո-բանվագ, կա-կանձ
- 4) բա-ձալի, գ-ջալ, ու-տաբեռ

3. Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին վանկն է շեշտվում:

- 1) հարագատ, քույրդ, աստղ
- 2) թրխկոց, հայեցի, գոնե
- 3) մեծատուն, ի դեպ, արագընթաց
- 4) մանավանդ, ուստր, ռուսերեն

4. Ո՞ր շարքի բոլոր բառերի տառերի և հնչյունների քանակն է հավասար.

- 1) անորոշ, հայորդի, արջաորս
- 2) կտակարան, չարորակ, ապերջանիկ
- 3) ակնբախ, ալեվարս, բարձրանալ
- 4) կայսերապաշտ, մանրադիտակ, հոգեվիճակ

5. Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում գաղտնավանկ կա:

- 1) սրախողխող, կրթություն, ճեպընթաց
- 2) կորնթարդ, ակնապիշ, հետզհետե
- 3) սանրել, գթասիրտ, կրճատել
- 4) մրցանակ, նախավկա, այտոսկր

6. Ո՞ր տարբերակում է տառակապակցության թվային արժեքը սխալ նշված:

- 1) Թ-9
- 2) ԺԲ -12
- 3) ԾԴ-64
- 4) Մ-200

7. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) անկողնակալ-արդար, առընթեր - կից, արձանանալ - անշարժանալ
- 2) անգուգական - անմնան, բարձրաբերձ - երկնաքեր, խափշիկ - խարտյաշ
- 3) իսկույն - անմիջապես, բազմապատկել - բաժանել, առերես - արտաքուստ
- 4) արագահոս - սրընթաց, առեղծված - հանելուկ, փութկոտ- դանդաղ

8. Ո՞րը *աստծու կրակ* դարձվածքի իմաստներից չէ:

- 1) դաժան, անողորմ
- 2) չարաճճի, շարժուն
- 3) ցավ, պատիժ
- 4) անշեջ հուր

9. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:

- 1) հեքիաթ, գլխարկ, սկիզբ
- 2) նաժիշտ, դանակ, վարունգ
- 3) սնգույր, աղի, սխտոր
- 4) տգետ, ստերջ, գավաթ

10. Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը կամ բառաձևերը համանուններ չեն:

- 1) երկինք - *զետին* - Արաքս *զետին*
- 2) մեկ կապ *գայուկ* - գորշ *գայուկ*
- 3) մկան *թակարդ* - սիրո *թակարդ*
- 4) գորքի *զունդ* - խմորի *զունդ*

11. Տրված բառերից ո՞րը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի:

- 1) ականավոր
- 2) ականակիտ
- 3) ականատես
- 4) ականապատ

12. Ո՞ր շարքի բոլոր բառերն են հողակապով:

- 1) արջաորս, բազմափորձ, բարգավաճ
- 2) բյուրասքանչ, բազկարձակ, տնտեսագետ
- 3) բարձրատոհմ, բարձիթողի, բարյացակամ
- 4) բանակատեղ, բառապաշար, բարձրանիստ

13. Ո՞ր շարքի բոլոր գոյականներն են ենթարկվում ներքին հոլովման:

- 1) նուռ, կնքահայր, տուն
- 2) անուն, շարասյուն, լիություն
- 3) փոստատուն, աստվածամայր, մանուկ
- 4) անկյուն, գարուն, որսաշուն

14. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում -ներ վերջավորությամբ:

- 1) որդեգիր, կաթնասուն, մեններգ
- 2) նավավար, հետախույզ, անցաթուղթ
- 3) սրունք, գրաբեր, արքայադուստր
- 4) հանքափոր, պատճեն, ջերմաչափ

15. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը ածական չէ:

- 1) Արարչագործ աստղի առաջ **Վշտոտ** սիրտս բացեցի:
- 2) Բաղերը **վայրի** թռան շվարած.
Ո՞վ է արշավում մռայլ գիշերով:
- 3) Եվ քո **քարացած** բռունցքում հիմա
Ես սուրն եմ դնում ահեղ ճշմարտի:
- 4) Ու կռունկների քարավանը նորից
Անուշ կարկաչով գարունն է բերում:

16. Ո՞ր շարքի բոլոր բայերն են ն խոնարհման:

- 1) հոգնած, սիրող, կարդում է, ծովի
- 2) կանչում, հեռացիր, չեն թռչում, զարգացող
- 3) ներկած, չի մեռնի, սկսիր, թեյելու էր
- 4) գովում էր, կգրոսենն, հիացել ենք, ուղղված

17. Ո՞ր շարքի բոլոր բայերն են պարզ (առանց բայական ածանցի):

- 1) ամրապնդում է, կորավ, գալիս եմ
- 2) վայելեք, տասնապատկել են, ա՛ռ
- 3) հեռանամ, կխոսի, ապացուցել
- 4) ըմբռնչխնեցին, թիավարում ենք, կժամանեն

18. Ո՞ր նախադասության մեջ դերանվան սխալ գործածություն կա:

- 1) Իմ վրայի բծերը ցույց տալուց առաջ մաքրի՛ր ձեռքերդ:
- 2) Սույնով հայտնում ենք մեր շնորհակալությունը Ձերդ մեծությանը՝ մեր հրավերն ընդունելու համար:
- 3) Գործարանի ամբողջ բանվորների շրջանում տարածվում էր ըմբոստության ալիքը:
- 4) Ոչ մեկը չէր հասկանում՝ ինչն էր նրա գայրույթի պատճառը:

19. Ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա:

- 1) Հենց այդ գյուղն է մեր որոնածը:
- 2) Այնպես էին խառնել ամեն ինչ՝ սատանան իսկ գլուխ չէր հանի:
- 3) Հենց գարունը բացվի, կտեղափոխվենք:
- 4) Չնայած սառնամանիքին՝ մրցումները չէին դադարել:

20. Ո՞ր շարքում են միայն մակրայներ:

- 1) գողեգող, ավանդաբար, այնպես, լիովին
- 2) վաղը, ցմահ, առհավետ, երբ
- 3) ամենուրեք, դեսուդեն, ներքև, սարն ի վեր
- 4) բոլորովին, այնչափ, քանիցս, հաճախ

21. Ի՞նչ բնույթի է տրված բարդ ստորադասական նախադասության ստորադաս նախադասությունը:

Երբ լսում եմ նրա երգը, իմ աչքի առաջ կանգնում է նա՝ իր թախծոտ դեմքով, միշտ ստեղծագործական սայրումներով լի, միշտ երգով հմայված իր սրտով:

- 1) ժամանակի պարագա
- 2) մասնավորող բացահայտիչ
- 3) ենթակա
- 4) որոշիչ

22. Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:

Ըստ լեզվագիտի՝ Եղիա մարգարեն ճանապարհ պիտի հարթեր համար դեպի Աստված, և նրա լեռները, և հարթ ճանապարհ պիտի բացվեր, բայց մարգարեի ձայնն անպատասխան

(հրեա, կանչ, իջնել, մնալ)

- 1) հրեայի, կանչերից, իջել էին, է մնում
- 2) հրեայի, կանչերով, կիջնեին, մնում է
- 3) հրեաների, կանչին, իջել էին, մնում է
- 4) հրեաների, կանչով, պիտի իջնեին, է մնում

23. Ընդգծվածներից ո՞րն է որոշիչ:

- 1) **Մեղմ** ու սիրագին ժպտում էր նա ինձ
Օտար կողմերում, այն ճամփի վրա:
- 2) **Գժկամ** նայում են ժայռերը խոժոռ,
Տխուր խաղում են ալիքները ժիր:
- 3) Ես կգամ, երբ դու կլինես **տրտում**,
Երբ երագներդ հավետ կմեռնեն:
- 4) Կանգնած եմ նորից **ահեղ** անտառում
Մութ ուղիների բաժանումի մոտ:

24. Ո՞ր տարբերակում բաղադրյալ ստորոգյալ չկա:

- 1) Նրա համար թանկ էին ընկերոջ դեմքը, ձայնն ու քայլվածքը, անգամ սովորություններն ու բնավորությունը:
- 2) Ասում էր, որ արդեն ուրախ է և հանգիստ:
- 3) Նա կարոտ էր բարի խոսքի, ջերմ վերաբերմունքի և արժանի էր գնահատվելու:
- 4) Վերջապես ձեռք բերեցինք նոր դասագրքերը և պիտի բարեխղճորեն պատրաստվենք քննություններին:

25. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Թագավորի այցելություններն Ուտիք այնքան հաճախակի դարձան, որ կասկածներ արթնացրին արքունիքի տիկնանց շրջանում:

- 1) Թագավորի այցելություններն Ուտիք հաճախակի դարձան արքունիքի տիկնանց շրջանում կասկածներ արթնացնելու չափ:
- 2) Թագավորի այցելություններն Ուտիք հաճախակի դարձան՝ կասկածներ արթնացնելով արքունիքի տիկնանց շրջանում:
- 3) Թագավորի այցելություններն Ուտիք կասկածներ արթնացրին արքունիքի տիկնանց շրջանում՝ այնքան հաճախակի դառնալու պատճառով:
- 4) Թագավորի այցելություններն Ուտիք, այդքան հաճախակի դառնալով, կասկածներ արթնացրին արքունիքի տիկնանց շրջանում:

26. Ընդգծվածներից ո՞րն է հատկացուցիչ:

- 1) Միայն հայ վանականն էր, որ առանց **ծածկոցի** ամբողջ գիշեր պայքարել էր ալիքների դեմ:
- 2) Ծերունին ասես **նավի** հետ տարուբերվում էր մտքերի ծովում:
- 3) Հիվանդն աչքերը բացեց և իր առջև տեսավ մի անծանոթ **երիտասարդի**:
- 4) **Մոմի** թրթռուն լույսը դեպի իրեն ձգեց ասես հենարան փնտրող նրա հայացքը:

27. Ենթակայական դերբայը ի՞նչ պաշտոնով հանդես գալ չի կարող:

- 1) բացահայտչի
- 2) որոշչի
- 3) ստորոգելիի
- 4) պարզ ստորոգյալի

28. Ո՞ր նախադասության մեջ Լ-ից առաջ ստորակետ չափի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Պարսպապատերին հապշտապ երևացին զինվորներ գենքերը պատրաստ պահած և հարձակման նշան արեցին:
- 2) Հայտնվեց կարճ ու գնդիկ մի գորական սաղավարտը գլխին և գնաց եկվորներին ընդառաջ:
- 3) Բոլորը հոգնատանջ էին և ամեն ինչից երևում էր արագանք էին կտրել երկար ու ձիգ ճանապարհը:
- 4) Հանկարծ փայլատակեց ինչ-որ լույս և շրջակայքը լուսավորեց:

29. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

1. Կակտուսները հետաքրքրական են ոչ միայն տեսքով, այլև իրենց մեկ այլ հատկությամբ. դրանք հիանալի հարմարվել են չորային կլիմային: Նրանց տերևները վերափոխվել են փշերի, մագիկների ու խոզանների, որոնք խիտ ծածկում են կակտուսների ցողունները և այնքան խոնավություն չեն գոլորշիացնում, որքան տերևները:
2. Մեկը նման է ոգնու, մյուսը՝ դոմի, երրորդը՝ աշտանակի: Լինում են տարբեր բարձրության. կան 1 սմ բարձրությամբ ու մի քանի գրամ քաշով «մատնաչափիկներ» և 25 մ բարձրությամբ, տոննաներ կշռող հսկաներ: Տարբեր են նաև կակտուսների ծաղիկները:
3. Կակտուսների հայրենիքը Մեքսիկան է: Հին հնդկացիները դրանք սուրբ բույս էին անվանում: Տարբեր տեսակի կակտուսներ են լինում՝ ծառանման, թփանման, խոտանման:
4. Որոշ կակտուսներ պարունակում են մինչև 3 հզ. լիտր ջուր: Անապատներում կակտուսները խոնավության միակ պահապաններն են և հաճախ են փրկում ճանապարհորդների կյանքը:

- 1) 3, 1, 4, 2
- 2) 2, 3, 1, 4
- 3) 3, 2, 1, 4
- 4) 2, 1, 3, 4

30. Ընդգծվածներից ո՞րը մակդիր չէ:

- 1) *սպասման* հիվանդ
- 2) *ծաղկուն* ձյուն
- 3) *վարսաթափ* ուռի
- 4) *հնագույն* մագաղաթ

31. Գրիգոր Զոհրապի ո՞ր նորավեպից է տրված հատվածը:

«Իր կյանքին անբաժան ընկերն էր այս տոկուն կաշիեն պարկը, որով ամեն իրիկուն իր տան պիտույքը, հացն ու միսը կտաներ, կամ պտուղը իր երկու փոքրիկ զավակներուն, որոնք դրան առջևեն կրողորվեին խոստմնալից ու խոստմնապահ այս պայուսակին շուրջը»:

- 1) «Փոստալ»
- 2) «Այրին»
- 3) «Այինկա»
- 4) «Ճիտին պարտքը»

32. «Մասնա ծներ» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) հերոսներից ո՞ւմ խոսքն է.

*Օ՛, քուրե՛ր, դուք կացե՛ք բարով,
Դուք ինձի քուրություն եք արե,
Օ՛, մերեր, դուք կացե՛ք բարով,
Դուք ինձի մերությունն եք արե,
Բարի՛ դրկիցներ, դուք կացե՛ք բարով,
Դուք կացե՛ք բարով մեծ ու պատիկով...*

- 1) Մեծ Մհերի
- 2) Քեռի Թորոսի
- 3) Դավթի
- 4) Սանասարի

33. Ո՞րն է Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ենթավերնագիրը:

- 1) «Ողբ ազնվատոհմ գորապետի»
- 2) «Ողբ հայրենասիրի»
- 3) «Ողբ քաջազարմ հայրենասիրի»
- 4) «Ողբ Հայաստանի»

34. Միքայել Նալբանդյանի ո՞ր բանաստեղծության մի հատվածն է մասնակի փոփոխություններով դարձել Հայաստանի Հանրապետության պետական օրհներգը:

- 1) «Ազատություն»
- 2) «Ապոլլոնին»
- 3) «Իտալացի աղջկա երգը»
- 4) «Մանկության օրեր»

35. Ո՞ր շարքում Պետրոս Դուրյանի բանաստեղծություններից չկա:

- 1) «Սիրել», «Արևին», «Առաջին ծիլեր»
- 2) «Հյուղը», «Լճակ», «Ջրտուր»
- 3) «Սիրերգ», «Ձոն», «Վայրկյան»
- 4) «Տխրություն», «Չմրան պարզ գիշեր», «Տրտունջք»

36. Տրված հատվածը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի ո՞ր հերոսի արտաքինի նկարագիրն է.

«Երիտասարդ մը, որ վաճառականի չէր նմաներ, սեղանավորի ալ չէր նմաներ, արհեստավորի ալ չէր նմաներ, գործավորի ալ չէր նմաներ և վերջապես անանկ բանի մը կնմաներ, որուն նմանը չկա»:

- 1) Խմբագրի
- 2) բժշկի
- 3) բանաստեղծի
- 4) դերասանի

37. Հատվածներից ո՞րը Վահան Տերյանի բանաստեղծություններից չէ:

- 1) Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շուկը մնաց,
Եվ ծաղիկները այդ սուրբ շուկով իմ սիրտը լցրին...
- 2) Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն,
Օղակելով լույս աստղերը մեկմեկու:
- 3) Լուսամփոփի պես աղջիկ, աստվածամոր աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմնի պես երագի...
- 4) Բարբարոսներ շատ կրգան ու կանցնեն անհետ,
Արքայական խոսքը մեր կրմնա հավետ:

38. Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

«Հայրս ասաց, որ իմ և քո միջև անանց անդունդ կա: Մենք վերևն ենք, դու ներքևը: Էլ մի՛ գա: Մոռացի՛ր ինձ»:

- 1) «Արտիստը» (Ալեքսանդր Շիրվանզադե)
- 2) «Ավելորդը» (Դերենիկ Դեմիրճյան)
- 3) «Ես և Նա» (Նար-Դոս)
- 4) «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը» (Վիլյամ Սարոյան)

39. Տրված բառերից քանիստ՞ն ուղղագրական սխալ կա.

խառնիճաղանճ, առժանիք, ասացվածք, դժխուհի, երբևիցե, ապաշխարել, կարևեր, զեղչել:

40. Նշված բառերից քանի՞սն են կազմությամբ ածանցավոր.

դժբախտ, հատիկ, կապիկ, նամակ, գնդակ, հրապարակ, առաջ, կառք:

41. Նշվածներից քանի՞սն են կապ.

ընդդեմ, հնուց, միջև, բացառությամբ, արդեն, վերաբերյալ, հոգուտ, դեռ:

42. Տրված նախադասության մեջ քանի՞ դերբայական դարձված կա (նախադասությունը կետադրված չէ):

Հասնելով Բերդասարի ստորոտին իշխանը դանդաղեցրեց արագ սլացող ձիերի ընթացքը:

43. Նախադասություններից քանիսու՞մ կետադրական սխալ կա:

- Հակառակ դրա, Կոմիտասը պարապում էր զօրուգիշեր:
- Գերմանիայի մայրաքաղաքի՝ աշխարհում հայտնի երաժշտական դպրոցի ռեկտորը քննում էր հայաստանցի հոգևորականին:
- Կոմիտասը բացատրում է, ինչքան են երգերի բառերն ու մեղեդիները համահունչ:
- Գոյություն ունի անվիճելի մի ճշմարտություն. այս կամ այն ժողովրդի ներկան հասկանալու համար, անհրաժեշտ է իմանալ նրա վաղնջական պատմությունը:

44. Նշվածներից քանիսի՞ հեղինակն է Ավետիք Իսահակյանը.

«Ռավեննայում», «Մեր պատմիչները և մեր գուսանները», «Օտար, ամայի ճամփեքի վրա», «Հոգեհանգիստ», «Հավերժական սերը», «Ասպետի սերը», «Սի մրահոն աղջիկ տեսա», «Հայոց վիշտը»:

45. Նշել այն հատուկ անունների համարները, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով.

1. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ, 2. ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՅԻ, 3. ՓՈՔՐ ՄԱՍԻՍ, 4. ԱՇՈՏ ԵՐԿԱԹ, 5. ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, 6. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, 7. ՆՈՐ ԶՈՒՂԱ, 8. ՄԱՍՅԱՅՈՏՆ ԳԱՎԱՌ, 9. ՍԱՆ ՖՐԱՆՅԻՍԿՈ:

46. Ո՞ր շարքերի բոլոր բառերն են դասավորված այբբենական կարգով:

1. ածխափոշի, ակնագործ, աղաման, ազբեստ
2. ամենաժլատ, այլազգի, անառիկ, անբաժանելի
3. անուն, անգործ, ամբիոն, առաջադիմական
4. անապատ, անձնագիր, անպարագիծ, անվախճան

47. Ո՞ր շարքերի բոլոր բառերի բոլոր վանկերն են փակ:

1. կանչել, դարպաս, ընդգծվել
2. անձանոթ, լուսամփոփ, իջվածք
3. դեղնակաուց, կտրտել, արդար
4. խորհուրդ, արծիվ, ամրացնել

48. Ո՞ր նախադասություններն են պարզ համառոտ:

1. Արամը լուռ լսում էր:
2. Վա՛յ, կոտորվեց:
3. Սոնա՛, կարդա՛:
4. Դասարանում չաղմկե՛լ:

49. Ա. Բակունցի պատմվածքների վերաբերյալ ո՞ր պնդումներում սխալ կա:

1. Հրաժեշտի օրը Խոնարհը աշակերտների հետ եկել էր դպրոցի բակ՝ ուսուցչին հրաժեշտ տալու: (*«Խոնարհ աղջիկը»*)
2. Սոնայի ամուսնությունից հետո Դիլանը և Սոնան այլևս երբեք չեն հանդիպում: (*«Միրիալ»*)
3. Հնձվորը մահակը անասելի թափով իջեցնում է տղայի թիկունքին, որովհետև նա պահաժոյի տուփ էր վերցրել անձանոթ մարդկանցից: (*«Ալպիական մանուշակ»*)
4. Պատմվածքն ավարտվում է նրանով, որ Սիմոնի մայրը փորձում է մխիթարել որդուն: (*«Սպիտակ ձիւն»*)
5. Սոնան ամուսնությունից մոտ մեկ տարի անց մահանում է: (*«Միրիալ»*)

50.Նշել Մուրացանի ստեղծագործությունների համարները.

1. «Գևորգ Մարգալետունի», 2.«Խենթը», 3.«Նոյի ագռավը», 4.«Ռսկի արաղաղ», 5.«Առաքյալը», 6.«Նամուս», 7.«Երկու տող»:

Բ մակարդակ

51. Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:

Վաղորդյան աղջամուղջը հետզհետե ան-ացավ(1)՝ իր տեղը զի-ելով(2) արևի շառագույն ճառագայթներին: Բնությունը զար-նեց(3): Ծառերի և ծաղիկների սաղար-ներին(4) նստած ցողը մեղմ-րեն(5) գոլորշիացավ, և յուր-րիևակ(6) փայլով շողշողաց մուգ կանաչ բուսականությունը: Պ-նված(7) սալորենին նագեց՝ ասես համբույր ուղարկելով ճ-դերին(8) թառած արագիլներին: Արթնացան նաև ծաղիկները՝ գինարբու-ր(9), սուսա-բարը(10), վարդը:

- 1) 1-է, 5-ն, 8-յու, 10-ն
- 2) 2-չ, 3-թ, 7-ճ, 9-կ
- 3) 1-է, 4-թ, 7-ճ, 8-յու
- 4) 3-թ, 6-օ, 9-կ 10-ն

52. Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում միասին.

- 1) խոսքի(մասային), գյուղե(գյուղ), հետ(ծննդյան), խեթ(խեթ)
- 2) փոխ(արքա), ըստ(ամենայնի), վեր(լուծել), ոչ(ինչ)
- 3) այս(պես), ի(գուր), մերձ(քաղաքային), հատ(ընտիր)
- 4) մաս(մաքուր), գլուխ(կոտրուկ), անդր(բևեռային), գագ(այրիչ)

53. Տրվածներից ո՞րը, ավելանալով *խոսք* բառին, *չ* արտահայտի փոխաբերական իմաստ:

- 1) ծանր
- 2) կեղտոտ
- 3) կցկտուր
- 4) մահացու

54. Ո՞ր բառի բացատրությունն է սխալ:

- 1) *ակնակապիճ* - աչքի փոսիկ
- 2) *բամբիչ* - լուր բերող
- 3) *ծանծաղ* - փոքր խորություն ունեցող
- 4) *գրգամուլ* - փափուկ կյանք սիրող

55. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):

Չկար ո՛չ, ո՛չ թուփ, ո՛չ խոտ. կար միայն զարհուրելի ու ահարկու, որը, էր առաջացնում մարդու

(1. ամայություն, 2. ծառ, 3. սիրտ, 4. սարսափ)

- 1) 1, 3, 4, 2
- 2) 2, 1, 4, 3
- 3) 4, 2, 1, 3
- 4) 2, 4, 1, 3

56. Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:

- 1) հրաշունչ, դեղնել, ջրագուրկ, արնաներկ
- 2) կամրջել, թուլամորթ, ամրակազմ, կարճատես
- 3) սիրահար, մրջնանոց, բաղձալի, տանտեր
- 4) միամիտ, սրատես, բանասեր, բնագետ

57. Ո՞ր շարքի բոլոր բառերը հոդ չունեն:

- 1) պատճեն, գայիսուն, կարկին, հանդ
- 2) վրձին, հոգուդ, բագին, սառը
- 3) թատրոն, դեղատուն, հարս, գինին
- 4) պարադոքս, գիրքս, ներս, բերդ

58. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ուղիղ խնդիր:

- 1) Մենք հոգնեցինք **ամենքին** անտեղի սպասելուց:
- 2) **Լիճն** ասես հրդեհվել էր վերջալույսի շողերից:
- 3) Մենք լսեցինք Կոմիտասի մի քանի **ստեղծագործություններ**:
- 4) Վերջապես մեծ դժվարությամբ հասանք **տուն**:

59. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

- Ինչպե՞ս կարող էր եղբայրդ նման քայլի գնալ, -տարակուսած ասաց հայրս.- ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ, բայց ակնհայտ է, որ այդ քայլին իր կամքով չի գնացել:

- 1) Հայրս տարակուսած ասաց, թե ինչպես կարող էր եղբայրս նման քայլի գնալ. ոչ մի կերպ նա չի կարողանում հասկանալ, բայց ակնհայտ է, որ այդ քայլին իմ կամքով չի գնացել:
- 2) Տարակուսած ասաց հայրս, որ ինչպես կարող էր եղբայրս նման քայլի գնալ, ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, բայց ակնհայտ է, որ այդ քայլին նրա կամքով չի գնացել:
- 3) Հայրս տարակուսած ասաց, որ նա ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, թե եղբայրդ ինչպես կարող էր նման քայլի գնալ, բայց համոզված է, որ այդ քայլին իր կամքով չի գնացել:
- 4) Հայրս տարակուսած ասաց՝ ինչպես կարող էր եղբայրս նման քայլի գնալ. ինքը ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, բայց ակնհայտ է, որ այդ քայլին իր կամքով չի գնացել:

60. Տրված նախադասության մեջ ի՞նչ անդամ է հարակատար դերբայը:

*Հոգնած նայում եմ ճամփաներին,
Մերմնացանները չդարձան տուն:*

- 1) ձևի պարագա
- 2) ստորոգելի
- 3) որոշիչ
- 4) պատճառի պարագա

61. Ո՞ր միտքն է սխալ Ա. Իսահակյանի «Մաադիի վերջին գարունը» ստեղծագործության վերաբերյալ:

- 1) Մաադին կյանքի վերջնագծին խորհում է աշխարհի ու կյանքի մասին:
- 2) Մաադին մտորում է, որ հարյուր տարվա կյանքն անցել է մի գիշերվա երազի պես:
- 3) Խոր ծեռության հասած բանաստեղծը շարունակում է հիանալ աշխարհի գեղեցկությամբ:
- 4) Մաադին մահանում է՝ խորապես հիասթափված կանանցից:

62. Տրված հատվածը Հովհաննես Շիրազի ո՞ր ստեղծագործությունից է:

*Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչիք վայրագ:*

- 1) «Հայ ժողովրդի երգը»
- 2) «Էքսպրոմտ»
- 3) «Բիբլիական»
- 4) «Թագադրում»

63. Բառազույգերից քանի՞սն են կազմված հականիշներից.

փառասեր - ինքնասեր, ապառիկ - կանխիկ, վեհանձն - փոքրոգի, խոժոռվել - ժպտալ,
հյուրընկալ - վանատուր, ուռուցիկ - գոգավոր, թուլանալ - սաստկանալ:

64. Տրված բառերից քանիսի՞ կազմությունն է՝ *արմատ+վերջածանց*.

տարատեսակ, ժողովուրդ, համալսարան, վարչություն, փառք:

65. Տրված նախադասության ձևաբանական վերլուծության տարրերակներից քանիստ՞ն սխալ կա:

Նստելով թավշյա բարձիկներով զարդարված արևելյան թախտին՝ մի քիչ շունչ առավ, ապա հագավ մետաքսե կապան, փափուկ մույկերը, կողքից կախեց արծաթյա փայլիլուն սուրը և սկսեց սպասել՝ երբ կկանչի թագավորը:

- **զարդարված** -հարակատար դերբայ, կրավորական սեռ
- **հագավ** -*ե* խոնարհման պարզ բայ, անցյալ կատարյալ
- **արևելյան** - ածական
- **կկանչի** -հարկադրական ապառնի, ներգործական սեռ

66. Նշել այն շարքերի համարները, որոնցում միայն անորոշ դերբայներ են:

1. կորցնել, թռչկոտել, թոցնել, իմացվել
2. մեծացնել, ծանոթանալ, գթալ, վախեցնել
3. զգացել, արագացնել, գտնել, պսպղալ
4. կպչել, տեսել, թարմացնել, հանգչել

67. Ո՞ր շարքերի բոլոր բառերում *երկինջյունի* հնչյունափոխություն կա:

1. ամենաքնքուշ, թուլակազմ, կեցություն, լուսափթիթ
2. մատենագիր, զեկուցագիր, ցոլցլալ, պատենավոր
3. բուրյան, հրապուրիչ, գործունեություն, սենեկապետ
4. ատենակալ, խուսափուկ, ողջունել, գունանկար

68. Մտքերից որո՞նք են հակասում տեքստի բովանդակությանը կամ չեն բխում նրանից:

Դարեր շարունակ մարդիկ փորձել են ստեղծել տարածության չափման միավորներ: Ոստնահետքերի միջև եղած հեռավորության չափումից առաջացել է ոտնաչափը, արմունկից մինչև միջնամատի ծայրը չափից՝ կանգունը և այլն: Դրանցից մեծ միավորների առաջացումը կապվում է հողաբաժանման հետ. հողագործը պետք է համոզված լիներ, որ իր հողակտորը իրեն հասանելիքից ավելի փոքր չէ: Սկզբնական շրջանում ոտնաչափերով չափվող հողակտորներն ակնհայտորեն անհավասար էին, քանի որ չափողի հասակից կախված՝ ոտնաչափը կարող էր տարբեր լինել: Բավական երկար ժամանակ չափման խնդիրը լուծել է եգիպտական կանգունը, որի չափը սահմանվեց ըստ քազավորի բազկի երկարության: Դրա գրանիտե բնօրինակը պահվում էր պալատում: Այնուհետև ֆրանսիացի հեղափոխականները ստեղծեցին մետրը, որի՝ որպես չափման միավորի, հիմքում դրված էր Հյուսիսային բևեռից մինչև հասարակածն ընկած հեռավորության 10 միլիոներորդ մասը: Արեգակնային համակարգում չափումներ իրականացնելու համար չափման միավոր ընդունվեց Երկրից մինչև Արեգակ միջին հեռավորությունը: Ավելի մեծ տարածությունների համար օգտագործվում է լուսատարի հասկացությունը: Դա այն հեռավորությունն է, որը լույսն անցնում է մեկ տարվա ընթացքում բացարձակ վակուումում:

1. Գոյություն ունեցող չափման միավորների առաջացման հիմնական դրոպապատճառներից մեկը կապվում է հողագործության հետ:
2. Եգիպտական կանգունը հավասար էր մեկ ոտնաչափի:
3. Ֆրանսիացի հեղափոխականների առաջարկած մետրը կազմում է հասարակածի 10 միլիոներորդ մասը:
4. Երկրից մինչև Արեգակ միջին հեռավորությունը մեկ լուսատարի է:

69. Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր ճիշտ է, Միսալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:

1. Ե՛վ եզակի, և՛ հոգնակի թիվ ունեցող արմատական գոյականներից միայն **մարդ** և **կին** բառերը չեն կարող հոգնակի կազմել **եր** կամ **ներ** վերջավորություններով:
2. Որոշ գոյականներ հանդես են գալիս միայն հոգնակի թվով:
3. Բացի **եր**, **ներ** վերջավորություններից կան հոգնակիի արտահայտման այլ ձևեր:
4. Կան որոշ աշխարհագրական անուններ, որոնք անեզական գոյականներ են:
5. Բոլոր բարդ բառերը, որոնց վերջին բաղադրիչը միավանկ բառ է, ստանում են **եր** հոգնակերս:
6. **Ներ**-ով հոգնակի կարող են կազմել միավանկ բառերից միայն նրանք, որոնք գրաբարում **ն** վերջնահնչյուն են ունեցել:

70. Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր ճիշտ է, Միսալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:

1. Միևնույն հոլովով դրված գոյականը կարող է կատարել տարբեր պաշտոններ:
2. Գոյականը տարբեր հոլովներով կարող է կատարել միևնույն պաշտոնը:
3. Ներգոյական հոլովով կարող է արտահայտվել միայն տեղի պարագան:
4. Անջատման անուղղակի խնդիրը արտահայտվում է բացառական հոլովով:
5. Նպատակի պարագան որևէ հոլովաձևով չի կարող արտահայտվել. այն ձևավորվում է միայն կապական կառույցներով:
6. Պատճառի պարագան դրվում է միայն գործիական հոլովով: